ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հավելված

Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության նախագահի
2025 թվականի մայիսի 19-ի թիվ 54-Լ կարգադրությամբ:

ԲԱՆԿԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՀԵՌԱՎԱՐ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ

1. Սույն հրապարակային պայմանները կարգավորում են «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի և Կորպորատիվ հաճախորդի միջև Հեռավար բանկային ծառայությունների (օնլայն և մոբայլ բանկինգ) մատուցման համակարգի օգտագործման հետ կապված հարաբերությունները:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

2. Սույն փաստաթղթում օգտագործվող սահմանումներն ու հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը՝

1) ***Բանկ***՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ,
2) ***Պայմաններ***՝ Հեռավար բանկային ծառայությունների (օնլայն և մոբայլ բանկինգ) մատուցման համակարգի օգտագործման հրապարակային պայմաններ,
3) ***Մոբայլ բանկինգ***՝ IDBusiness Mobile բջջային հավելվածով Բանկի հաճախորդին իր հաշիվներով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման և/կամ գործարք /այդ թվում՝ գործարքի հետ առնչվող գործողություններ/ կատարելու հնարավորություն ստեղծող համակարգ,
4) ***Օնլայն բանկինգ***՝ IDBusiness.am հարթակի միջոցով Բանկի հաճախորդին իր հաշիվներով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման և/կամ գործարք /այդ թվում՝ գործարքի հետ առնչվող գործողություններ/ կատարելու հնարավորություն ստեղծող առցանց համակարգ,
5) ***համակարգ***՝ Հեռավար բանկային ծառայությունների մատուցման համակարգ,
6) ***Օգտատեր***՝ Համակարգը օգտագործող,
7) ***Հաճախորդ***՝ Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ով հանդիսանում է Բանկի հաշվետեր, ընդ որում՝ սույն պայմաններում «Հաճախորդ» բառն օգտագործվում է նկատի ունենալով նաև որպես Օգտատեր, այնքանով, որքանով տվյալ կարգավորումը կիրառելի կլինի Օգտատիրոջ նկատմամբ,
8) ***Օգտանուն***՝ Հաճախորդի հեռախոսահամարը, որով վերջինս գրանցվել է Համակարգում,
9) ***Գաղտնաբառ***՝ Օգտատիրոջ կողմից ստեղծվող տառերի, թվերի և սիմվոլների համակցություն, որը Համակարգի կողմից օգտագործվում է որպես Օգտատիրոջ նույնականացման միջոց և թույլ է տալիս մուտք գործել Համակարգ և օգտվել Համակարգում հասանելի ծառայություններից,

10) ***PIN կոդ***՝ Օգտատիրոջ կողմից ստեղծվող թվերի համակցություն, որը Համակարգի կողմից դիտվում է որպես Օգտատիրոջ էլեկտրոնային ստորագրություն և թույլ է տալիս նրան կատարել գործարքներ, ինչպես նաև կատարել Գաղտնաբառի ու Բանկի կողմից սահմանված որոշ տվյալների փոփոխություններ,

11) ***կենսաչափական նույնականացում***՝ Մոբայլ բանկինգ համակարգի միջոցով մատնահետքի կամ դեմքի նույնականացում:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Բանկը Համակարգի միջոցով Հաճախորդներին տրամադրում է իրենց հաշիվներով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման, ինչպես նաև գործարքներ կատարելու հնարավորություն:

4. Համակարգով գործառնությունների իրականացման հասանելիություն ստանալու համար Բանկը սահմանում է պատշաճ նույնականացման պահանջ: Ընդ որում՝ սույն կետով նախատեսված պատշաճ նույնականացում է համարվում «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի որևէ մասնաճյուղ այցելելու միջոցով Բանկի տարածքում անցած նույնականացումը, հեռախոսազանգի միջոցով կամ Բանկի տարածքից դուրս՝ Բանկի աշխատակցի կողմից կատարված նույնականացումը: Հաճախորդի նույնականացումն իրականացվում է ՀՀ օրենսդրության, ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հաստատված իրավական ակտերի և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

5. Հաճախորդի Օգտանունը, Գաղտաբառը, ինչպես նաև PIN կոդը ձևավորվում է Հաճախորդի կողմից Համակարգում գրանցվելիս և կարող է փոփոխվել Հաճախորդի կողմից, բացառությամբ Օգտանվան, որի փոփոխությունն իրականացվում է Բանկի կողմից:

6. Յուրաքանչյուր անգամ Մոբայլ բանկինգ և Օնլայն բանկինգ մուտք գործելուց առաջ պահանջվում է հավաստագրում, որը ենթադրում է Հաճախորդի կողմից իր Օգտանվան և Գաղտնաբառի, ինչպես նաև PIN կոդի մուտքագրում (եթե Հաճախորդը չի ակտիվացրել կենսաչափական նույնականացումը Մոբայլ բանկինգի դեպքում) և Համակարգի միջոցով Օգտանվան, Գաղտնաբառի և PIN կոդի ինքնաշխատ նույնականացում:

7. Եթե Հաճախորդը դուրս չի եկել Մոբայլ բանկինգ հավելվածից (ուղղակի փակել է այն), ապա մուտք գործելու համար պահանջվում է միայն PIN կոդի մուտքագրում (եթե Հաճախորդը չի ակտիվացրել կենսաչափական նույնականացումը): Եթե Հաճախորդը ակտիվացրել է կենսաչափական նույնականացումը, ապա PIN կոդի մուտքագրում չի պահանջվում և իրականացվում է կենսաչափական նույնականացում:

8. Սույն փաստաթուղթը հանդիսանում է Հրապարակային պայմանագիր, որը Հաճախորդի կողմից ակցեպտավորված է համարվում Համակարգում էլեկտրոնային եղանակով այն ընդունող կոճակը սեղմելու միջոցով:

9. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Բանկն իրավասու է միակողմանիորեն փոփոխել Պայմանները, ինչի մասին Բանկը Հաճախորդին ծանուցում է վերջինիս համար հասանելի

վայրերում և միջոցներով, մասնավորապես՝

1) Բանկի ինտերնետային կայքէջում՝ https://www.idbank.am/ և/կամ

2) Բանկի մասնաճյուղերում և Հաճախորդների սպասարկումն իրականացնելու համար նախատեսված այլ վայրերում առկա տեղեկատվական վահանակներում տեղեկատվության տեղադրման միջոցով, և/կամ,

3) Կապի միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս Հաճախորդին ստանալու և հավաստիանալու, որ տեղեկատվությունը ուղարկվել է Բանկի կողմից, օրինակ՝ փոստային կապով, Բանկում գրանցված հեռախոսահամարով, sms հաղորդագրություն ուղարկելու միջոցով, Բանկում գրանցված էլեկտրոնային հասցեին ուղարկված նամակով:

10. Սույն գլխում նշված տեղեկությունները Բանկն իր հայեցողությամբ հրապարակում է վերոհիշյալ միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով: Պայմանների փոփոխություններն ուժի մեջ են մտնում Հաճախորդի կողմից այդ մասին ծանուցվելուց հետո Համակարգի միջոցով առաջին իսկ գործարք կատարելու պահից և համարվում են Հաճախորդի կողմից ակցեպտավորված:

ԳԼՈՒԽ 4. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ

11. Համակարգով գործառնությունների իրականացման հասանելիություն ստանալու համար սահմանված նույնականացումն իրականացվում է՝

1) Բանկի մասնաճյուղերում,
2) Հեռախոսազանգի միջոցով.
3) Համակարգի կողմից՝ համապատասխան հրահանգներին հետևելու միջոցով:

12. Հաճախորդը Բանկի մասնաճյուղում նույնականացում անցնելու համար Բանկ է ներկայացնում Հաճախորդի/իրավասու անձի անձը հաստատող փաստաթուղթը, անհրաժեշտության դեպքում նաև՝ լիազորագիր: Լիազորագրի ներկայացման կարգն ու պահանջները սահմանված են Իրավաբանական անձանց և Անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների բացման և սպասարկման կանոններով՝ հետևյալ Հղումով: Հաճախորդը Բանկի կողմից ներկայացված քայլերի հաջորդականությունը կատարելու միջոցով անցնում է նույնականացում:

13. Հաճախորդը հեռախոսազանգի միջոցով նույնականացում անցնելու համար զանգահարում է Բանկում գրանցված հեռախոսահամարով՝ Բանկի (+37410) 59 33 11 կամ +37410 59 33 33 հեռախոսահամարներին (կամ Հաճախորդի հետ կարող է կապ հաստատել Բանկի աշխատակիցը, եթե հաճախորդը դիմել է հեռավար սպասարկման համակարգերով, էլեկտրոնային փոստով կամ Բանկի աշխատակիցը այլ եղանակով ստացել է տեղեկատվություն այն մասին, որ Հաճախորդը ցանկանում է օգտվել Համակարգից), Բանկի կողմից ներկայացված քայլերի հաջորդականությունը կատարելու միջոցով անցնում է նույնականացում:

14. Սույն պայմանների 4-րդ կետով նախատեսված կարգով և պայմաններով իրականացված Հաճախորդի նույնականացումը համարվում է պատշաճ նույնականացում և բավարար է

Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու համար:

15. Մոբայլ բանկինգի համակարգում նույնականացման գործընթացը անցնելուց հետո Հաճախորդը նույն Օգտանունով, Գաղտնաբառով և PIN կոդով կարող է օգտվել նաև Օնլայն բանկինգի համակարգից:

ԳԼՈՒԽ 5. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐՈՇ ԿԱՆՈՆՆԵՐ

16. Համակարգում գործարքներ կատարելիս PIN կոդի մուտքագրումը դիտվում է որպես էլեկտրոնային ստորագրություն և տալիս է Հաճախորդին գործարքները հաստատելու հնարավորություն: Եթե Հաճախորդը ակտիվացրել է կենսաչափական նույնականացումը, ապա Մոբայլ բանկինգ համակարգում PIN կոդի մուտքագրում չի պահանջվում և գործարքները հաստատվում են կենսաչափական նույնականացմամբ:

17. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ կենսաչափական նույնականացման տեխնիկական լուծման պատասխանատվությունը կրում է համապատասխան սարքավորման և լուծման ստեղծող կազմակերպությունը:

18. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ սույն մասում նկարագրված էլեկտրոնային եղանակով ստորագրությունը հավասարազոր է և ունի նույն իրավաբանական ուժը, ինչ Հաճախորդի/իրավասու անձի ձեռագիր ստորագրությունը, իսկ վերջինիս կողմից էլեկտրոնային եղանակով ստորագրված էլեկտրոնային փաստաթղթերը առաջացնում են տվյալ փաստաթղթի բովանդակությունից բխող իրավական հետևանքներ:

19. Համակարգի օգտագործման միջոցով կնքվող գործարքների նկատմամբ կիրառվում են տվյալ գործարքի համապատասխան պայմանագրով /համաձայնագրով/ և/կամ Բանկի կողմից իր պաշտոնական՝ www.idbank.am կայքում հրապարակված տվյալ գործարքի/ծառայության տեղեկատվական ամփոփագրերով սահմանված պայմաններն և սակագները:

ԳԼՈՒԽ 6. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

20. Բանկը գործադրում է լավագույն ջանքերը Համակարգը և դրանով կատարվող գործառնություններն առավել անվտանգ դարձնելու համար: Տեխնոլոգիական զարգացմանը զուգընթաց Բանկը պարբերաբար կատարելագործում է Համակարգի անվտանգային միջոցները, ուստի նաև իրավասու է ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխել ինչպես Համակարգի օգտագործման տեխինկական պայմանները, այնպես էլ սահմանել Հաճախորդի կողմից գործառնություն կատարելու իրավասություն տրամադրելու և յուրաքանչյուր անգամ գործառնություն կատարելու նույնականացման, հավաստագրման, ինչպես նաև էլեկտրոնային ստորագրման նոր եղանակներ և պահանջներ:

21. Բանկը և Հաճախորդը ընդունում են, որ Համակարգի և դրանցով կատարվող

գործառնությունների անվտանգությունը լավագույն ձևով ապահովելու նպատակով հավասարապես օժտված են պարտականություններով: Ըստ այդմ՝ սույն Պայմաններով սահմանվում են պարտադիր կատարման ենթակա Բանկի և Հաճախորդի հետևյալ պարտականությունները.

22. **Հաճախորդը պարտավոր է՝**

1) Գաղտնի պահպանել Համակարգ մուտք գործելու համար գաղտնաբառը և PIN կոդը:

2) Երրորդ անձանց հասանելի չդարձնել Համակարգի մուտքի հնարավորությունը: Մասնավորապես՝ ապահովել Համակարգ մուտք գործելու համար նախատեսված իրենց տեխնիկական սարքերի /սմարթֆոն, պլանշետ, և այլն/ ֆիզիկական անվտանգությունը, ինչպես նաև վնասաբեր ծրագրերից պաշտպանությունը:

3) Մուտք գործելու համար տրամադրված Օգտանունն ու Գաղտնաբառը և PIN կոդը երրորդ անձանց հասանելի դառնալու, Համակարգեր մուտք գործելու համար նախատեսված իրենց տեխնիկական սարքերի կորստի, չարտոնված ներթափանցման դեպքի, ինչպես նաև ցանկացած այլ կասկածելի և ռիսկային դեպքերի ժամանակ անհապաղ տեղյակ պահել Բանկին՝ զանգահարելով (+37410) 59 33 11 կամ (+37410) 59 33 33 հեռախոսահամարներով:

Ընդ որում, Հաճախորդը կրում է սույն կետով նշված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկը և դրանից բխող իրավական հետևանքները: Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից իր պարտականությունների չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար:

23. **Բանկը պարտավոր է՝**

1) Հաճախորդի կողմից սույն պայմանների 22-րդ կետի 3)-րդ ենթակետով նախատեսված կարգով արգելափակման անհրաժեշտության մասին հայտնելուց անմիջապես հետո արգելափակել Հաճախորդի Համակարգը:

2) Ապահովել Համակարգի անվտանգային միջոցների անընդհատությունը:

3) Գործադրել լավագույն ջանքերը Համակարգի անվտանգության միջոցների կատարելագործման համար:

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և ծավալներով ապահովել Հաճախորդի վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը:

5) Պատասխանել Համակարգի օգտագործման վերաբերյալ Հաճախորդի բանավոր և գրավոր հարցումներին:

24. Հաճախորդի կողմից Պայմաններով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու, ինչպես նաև Բանկի մոտ Համակարգի ապօրինի օգտագործման կասկածի դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդի համար արգելափակել Համակարգի հասանելիությունը:

25. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից Պայմաններով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու արդյունքում, ինչպես նաև ոչ իր մեղքով Հաճախորդի կրած վնասների համար:

26. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Պայմաններով նախատեսված պահանջների պահպանումը բխում է իր լավագույն շահից, իսկ դրանց չկատարումը կարող է հանգեցնել

բացասական հետևանքների, որի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է